# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 60-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԿՈՒՂՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 29.01.2021թ. N 18-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 19022021-06-0049 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Անահիտ Գևորգի Նալբանդյանն ընդունել է նկուղով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, N 7-18/2 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 29.01.2021թ. N 18-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 79.68 քմ արտաքին մակերեսով (68.1 քմ ներքին մակերեսով) նկուղով ավտոտնակը՝ 87648 (ութսունյոթ հազար վեց հարյուր քառասունութ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00484 հա մակերեսով հողամասը՝ 39204 (երեսունինը հազար երկու հարյուր չորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Անահիտ Գևորգի Նալբանդյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում նկուղով ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 22
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 61-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 08.02.2021թ. N 35-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 19022021-06-0056 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Արթուր Ռուբենի Գևորգյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 4-30/1 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 08.02.2021թ. N 35-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 33.25 քմ արտաքին մակերեսով (27.9 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը՝ 36575 (երեսունվեց հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00333 հա մակերեսով հողամասը՝ 26973 (քսանվեց հազար ինը հարյուր յոթանասուներեք) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Արթուր Ռուբենի Գևորգյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 22
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 62-Ա

### 06-002-0101-0029 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԾԱԾԿԸ, 0.12 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.0087 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19.01.2021Թ. N 10-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ բնակելի տունը, ծածկը չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Անդրանիկ Սերյոժայի Մոսինյանի դիմումը, անձնագրի պատճենը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 23.12.2019թ. թիվ 50 տեղեկանքը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.12.1993թ. N 20/9 որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0101-0029), 1985 թվականին կառուցված բնակելի տունը, ծածկը ինչպես նաև կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.12 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը և ավել օգտագործվող սահմանազատված 0.0087 հա մակերեսով հողամասը, Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի ուժով համարել Անդրանիկ Սերյոժայի Մոսինյանի (ծնված՝ 07.02.1964թ.) և Նաիրա Ստեփանի Հախինյանի (ծնված՝ 16.07.1976թ.) համասեփականությունը:

2. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, փողոց 6, նրբանցք 1, N 10 փոստային հասցե:
3. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 19.01.2021թ. «06-002-0101-0029 ծածկագրում գտնվող բնակելի տունը, ծածկը և 0.12 հա մակերեսով տնամերձ հողամասը և ավել օգտագործվող 0.0087 հա մակերեսով սահմանազատված հողամասն օրենքի ուժով սեփական համարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 10-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 63-Ա

### ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.01.2021Թ. N 22-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ մասերով, 18.05.2006թ. N 912-Ն որոշման 11-րդ, 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N 88 որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված տնտեսական սենյակը և կատարված ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ և պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Ազնիվ Նիկոլի Վիրաբյանի լիազորված անձ՝ Արթուր Սեյրանի Չոփուրյանի դիմումը, Ազնիվ Նիկոլի Վիրաբյանի սեփականության իրավունքի վկայականը, «ԱԿԱ-անձնագրի պատճենը, լիազորագիրը, սեփականության իրավունքի վկայականը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 22.11.2019թ. տրված N 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***

1. Փոփոխել Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասում գտնվող, Ազնիվ Նիկոլի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.00735 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում պետական գրանցում ստացած արտադրական նշանակության կաթսայատան գործառնական նշանակությունը և այն հաշվառել բնակելի նշանակության՝ որպես բնակելի տուն օգտագործելու:

2. Կատարված շինարարական աշխատանքները, ՀՀ կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշման համաձայն, դասակարգվում են շինարարական ցածր ռիսկայնության աստիճանի (գտնվում են շինարարական աշխատանքների ռիսկայնության առաջին գոտում), ուստի, միջնորմների փոփոխությունների արդյունքում կատարված ձևափոխությունները շինարարության թույլտվություն չեն պահանջում:
3. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասում գտնվող, Ազնիվ Նիկոլի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.00735 հա մակերեսով հողամասում 2008թ. ինքնակամ կառուցված 37.66 քմ արտաքին մակերեսով (31.2 քմ ներքին մակերեսով) տնտեսական սենյակը և կատարված ձևափոխությունները:
4. Ալավերդի քաղաքի Սանահին Կայարան թաղամասում գտնվող, Ազնիվ Նիկոլի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող, 0.00735 հա մակերեսով հողամասում գտնվող բնակելի տանը և 2008թ. ինքնակամ կառուցված տնտեսական սենյակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Կայարան թաղամաս, N 3-35/2 փոստային հասցե:
5. Օրինականացման համար սահմանված ընդհանուր՝ 36788 (երեսունվեց հազար յոթ հարյուր ութսունութ) դրամ վճարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Շինության զբաղեցրած 0.00735 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
7. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:
8. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 29.01.2021թ. «Սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված տնտեսական սենյակն ու կատարված ձևափոխություններն օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 22-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՔՍԻՄ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 64-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.10.2017Թ. N 360-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի ղեկավարի 25.10.2017թ. «Կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» N 360-Ա որոշման մեջ 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «Անշարժ գույքի գրանցված հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում»:
2. Ալավերդի համայնքի ղեկավարի 25.10.2017թ. «Կառուցապատման իրավունքով հողամաս տրամադրելու մասին» N 360-Ա որոշման մեջ 4-րդ կետից հետո լրացնել 5-րդ կետը հետևյալ խմբագրությամբ.
   «Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.06.2006թ. N 1084-Ն որոշման, 06-002-0038-0005 ծածկագրով 16.90 հա մակերեսով հողամասը բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս է»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 22
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 65-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն որոշումով, 18.05.2006թ.N 912-Ն որոշման 33-րդ կետով, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության բաց պատշգամբով տնտեսական սենյակով ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲԾՏ» ՓԲ ընկերության կողմից 29.01.2021թ. տրված թիվ 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 3/22 շենքի հյուսիսային մասում գտնվող՝ ինքնակամ կառուցված, բնակելի նշանակության 171.905 քմ արտաքին մակերեսով (154.3 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով տնտեսական սենյակով ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 3/22 շենքի հյուսիսային մասում գտնվող, ինքնակամ կառուցված, բնակելի նշանակության 171.905 քմ արտաքին մակերեսով (154.3 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով տնտեսական սենյակով ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00613 հա մակերեսով հողամասով:
3. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 3/22 շենքի հյուսիսային մասում գտնվող բաց պատշգամբով տնտեսական սենյակով

ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 3/22-6/1 փոստային հասցե:

4. Շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված բաց պատշգամբով տնտեսական սենյակով ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնական կառույցն իրականացրած անձին՝ Մելանյա Զարմայրի Շավինյանին, օրինականացված բնակելի նշանակության բաց պատշգամբով տնտեսական սենյակով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 22
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 66-Ա

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Կարինե Նապոլեոնի Հակոբյանի դիմումը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված վերաբաժանվող գույքի հատակագծերը, սեփականության իրավունքի N 28122012-06-0259 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Կարինե Նապոլեոնի Հակոբյանին, Արմեն Սեյրանի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, 7 փողոց, N 30 հասցեում գտնվող, 0.1044 հա մակերեսով հողամասը վերաբաժանել՝ 0.03808 հա և 0.06633 հա մակերեսների, իսկ բնակելի տունը և շինությունները վերաբաժանել՝ 70.7 քմ, 96.1 քմ մակերեսների:
2. Վերաբաժանված 0.03808 հա մակերեսով ծանրաբեռնված հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, 7 փողոց, N 30/1 փոստային հասցե, իսկ մյուս՝ 0.06633 հա մակերեսով ծանրաբեռնված հողամասի փոստային հասցեն թողնել նույնը՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ակներ թաղամաս, 7 փողոց, N 30:
3. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 67-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.07.2020թ. N 60-Ա և համայնքի ղեկավարի 04.08.2020թ. N 239-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 2278818 վկայականը, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից 23.02.2021թ. տրված N 117 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող «Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի թիվ 9 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքին /նախկին Լոռու մարզի Հաղպատի գյուղապետարանին սեփականության իրավունքով պատկանող մանկապարտեզի շենքին/ տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, փողոց 19, N 2 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 68-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.07.2020թ. N 60-Ա և համայնքի ղեկավարի 04.08.2020թ. N 239-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 1822482 վկայականը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի կողմից 24.02.2021թ. տրված N 118 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող «Ալավերդի համայնքի Աքորի գյուղի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքին /նախկին Լոռու մարզի Աքորու գյուղապետարանին սեփականության իրավունքով պատկանող մսուր-մանկապարտեզի շենքին/ տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, փողոց 4, N 30 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 69-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾԱԾԿՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն որոշումով, 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ կետով, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության ծածկով ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում է քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից 27.01.2021թ. տրված թիվ 0-40 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/32 շենքի հարավ-արևելյան մասումգտնվող՝ ինքնակամ կառուցված, բնակելի նշանակության 81.69 քմ արտաքին մակերեսով (75.0 քմ ներքին մակերեսով) ծածկով ավտոտնակի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/32 շենքի հարավ-արևելյան մասումգտնվող, 1996թ. ինքնակամ կառուցված, բնակելի նշանակության 81.69 քմ արտաքին մակերեսով (75.0 քմ ներքին մակերեսով) ծածկով ավտոտնակը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.00443 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի N 2/32 շենքի հարավ-արևելյան մասում գտնվող ծածկով ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, N 2/32-57/1 փոստային հասցե:
4. Շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ օրինականացված ծածկով ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Լաուրա Լյոնի Թամազյանին, օրինականացված բնակելի նշանակության ծածկով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. փետրվարի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 70-Ա

### ՍՈՒՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԵՐԻՑՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Սուրեն Ալբերտի Երիցյանի դիմումը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊ ընկերության կողմից տրված վերաբաժանվող գույքերի հատակագծերը, սեփականության իրավունքի N 21042016-06-0012 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Սուրեն Ալբերտի Երիցյանին պատկանող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 6 հասցեում գտնվող, առևտրի կենտրոնով ծանրաբեռնված 0.060 հա մակերեսով հողամասը վերաբաժանել՝ 0.036 հա, 0.024 հա մակերեսների:
2. Վերաբաժանված 0.036 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 6/1 փոստային հասցե, իսկ մյուս մասին՝ 0.024 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Թումանյան փողոց, N 6/2 փոստային հասցե:
3. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 24
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՓԵՏՐՎԱՐԻ 2021 թվականի N 71-Ա

### ԼՈՒՍԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 25.02.2021թ. արձանագրությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Էնգելս 4/55 հասցեի բնակիչ Լուսինե Ռուբենի Հարությունյանին նշանակել քաղաքացի Լուիզա Պավլովնա Քերխանաջևայի /ծնված՝ 31.03.1940թ./ պատրոն /օգնական/:
2. Լուսինե Ռուբենի Հարությունյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու Լուիզա Պավլովնա Քերխանաջևային հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. փետրվարի 25
ք. Ալավերդի